EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 429/15

Ֆելիքս ԳԵՎՈՐԳՅԱՆՆ

ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Հինգերորդ բաժանմունք), 2024 թվականի դեկտեմբերի 19-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Դիանա Սարկու [Diana Sârcu]՝ Նախագահ,

Կատերինա Շիմաչկովա [Kateřina Šimáčková],

Միկոլա Գնատովսկի [Mykola Gnatovskyy]՝ դատավորներ,

եւ Վիկտորիա Մարադուդինա [Viktoriya Maradudina]՝ *Բաժանմունքի քարտուղարի տեղակալի պաշտոնակատար*,

հաշվի առնելով 2014 թվականի դեկտեմբերի 18-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

անցկացնելով խորհրդակցություն, որոշեց հետեւյալը.

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատու պրն Ֆելիքս Գեւորգյանը ծնվել է 1979 թվականին: Նրան ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Եգորյանը:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն դիմումատուի այն բողոքը, որը վերաբերում է վատ վերաբերմունքի վերաբերյալ նրա պնդումների մասով ենթադրյալ արդյունավետ քննություն չիրականացնելուն, ուղարկվել է

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Հայաստանի կառավարություն (Կառավարություն), որը ներակայացրել է գանգատի ընդունելիության եւ ըստ էության քննության վերաբերյալ դիտարկումներ: Դիտարկումներն ուղարկվել են դիմումատուին, որին առաջարկվել է ներկայացնել իր դիտարկումները: Քարտուղարության գրությանը պատասխան չի ստացվել:

2021 թվականի հունվարի 11-ի՝ պատվիրված առաքանու միջոցով ուղարկված գրությամբ դիմումատուն ծանուցվել է այն մասին, որ նրա դիտարկումների ներկայացման համար թույլատրված ժամկետը լրացել է 2019 թվականի մարտի 18-ին, եւ որ ժամկետի երկարաձգման համար դիմում չի ներկայացվել: Դիմումատուի ուշադրությունը հրավիրվել է Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի վրա, որով նախատեսվում է, որ Դատարանը կարող է գանգատը հանել քննվող գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնեն եզրակացության այն մասին, որ դիմումատուն մտադիր չէ հետամուտ լինելու գանգատին: Այնուամենայնիվ, պատասխան չի ստացվել:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Վերոշարադրյալի լույսի ներքո, ինչպես նաեւ Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով երաշխավորված իրավունքների նկատմամբ հարգանքի մասով որեւէ հատուկ հանգամանքի բացակայության պարագայում Դատարանը, Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետին համապատասխան, համարում է, որ գանգատի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ:

Համապատասխանաբար գործը պետք է հանվի քննվող գործերի ցուցակից:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Որոշում է գանգատը հանել քննվող գործերի ցուցակից:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2025 թվականի հունվարի 23-ին:

Դիանա Սարկու Վիկտորիա Մարադուդինա

ԳԵՎՈՐԳՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ

Նախագահ

Քարտուղարի տեղակալի
պաշտոնակատար